# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2

ք. Երևան «31» հունվար 2020թ.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամն, ի դեմս ռեկտոր Ռ.Զ.Մարուխյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Դաղունցի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է առողջության ապահովագրման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. **Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը մեկ անձի համար կազմում է** 52000 (**հիսուներկու հազար**) **ՀՀ դրամ**:

Մեկ ամսվա ապահովագրավճարը հավասար է փաստացի տվյալ ամսվա ընթացքում ապահովագրված անձանց քանակի և մեկ անձի ապահովագրավճարի բազմապատիկին:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին, հանձման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրվելուց հետ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2020թվականի փետրվարի 1-ից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է __13__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ | «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ |
| Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105 | Հասցեն՝ ք.Երևան, Հյուսիսային պող.10 |
| Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ | Բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 11800109943100 | Հ/Հ 247010050745 |
| ՀՎՀՀ 01504054 | ՀՎՀՀ 02574465 |
| Ռեկտոր---------- Ռ.Մարուխյան | Տնօրեն ---------- Ա.Գաղունց |
| (ստորագրություն) ԿՏ | (ստորագրություն) ԿՏ |

Հավելված N 1
« 31 » հունվար 2020թ. կնքված
N ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հերթական համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ծառայության անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր առավելագույն գումարը ՀՀ դրամ | ընդհանուր առավելագույն քանակը | Ծառայության մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 66511120 | Առողջության ապահովագրման ծառայություն | Համաձայն հավելված 1.1-ի | դրամ | 44.200.000 | 850 մարդ | ք. Երևան Տերյան 105 | Պայմանագիրը ուժի մեջ կմտնի 2020 թվականի փետրվարի 1-ից և կգործի մինչև 2021 թվականի հունվարի 31-ը, ընդ որում 2021 թվականին Ծառայությունը կմատուցվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Դեկտոր———————— Ռ.Մարուխյան
(ստորագրություն) ԿՏ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ

Հասցեն՝ ք.Երևան, Հյուսիսային պող.10
Բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010050745
ՀՎՀՀ 02574465

Տնօրեն ———————— Ա.Դաղունց
(ստորագրություն) ԿՏ

Հավելված 1.1

| գնման առարկայի անվանումը | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ |
|---|---|
| Առողջության ապահովագրման ծառայություն | **Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**<br>1. Ապահովագրական գումարը՝ 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:<br>2. Փաթեթը ներառում է ստորև նշված ծառայությունները, որոնք ենթակա են հատուցման հետևյալ դեպքերում՝ անհետաձգելի բուժում պահանջող հիվանդություններ և վիճակներ, սուր հիվանդություններ և վիճակներ, քրոնիկ հիվանդությունների սրացումներ, վիրաբուժական հիվանդությունների պլանային բուժում:<br>3. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրական ընկերության կողմից անհրաժեշտ է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ ներկայացնել եռամսյակային կտրվածքով տեղեկատվություն, առողջության ապահովագրության փաթեթից օգտված շահառուների թվաքանակի և փոխհատուցված գումարի վերաբերյալ:<br>**II. ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ**<br>2.1. Շտապ օգնության խմբի շուրջօրյա այց, այդ թվում՝ մասնագիտացված<br>2.2. Բժշկի առաջնային զննում, նախնական ախտորոշում<br>2.3. Անհետաձգելի ախտորոշիչ-բուժական միջոցառումների իրականացում կանչի վայրում<br>2.4. Անհետաձգելի բուժման դեղորայքային ապահովում<br>2.5. Հիվանդի տեղափոխում Բժշկական հաստատություն առանձնակի դեպքերում, երբ անհրաժեշտ է հատուկ կահավորված սանիտարական տրանսպորտ և անհրաժեշտ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի ուղեկցություն<br>**III. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ**<br>3.1. Խորհրդատվական ընդունելություններ բժիշկ-մասնագետների կողմից, այդ թվում՝ նեղ մասնագետների<br>3.2. Թերապևտիկ հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում<br>3.3. Վիրաբուժական հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում<br>3.4. Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, փափուկ հյուսվածքների սալջարդ, վերքեր կամ դրանց համակցում) բուժում ամբուլատոր պայմաններում<br>3.5. Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում ամբուլատոր պայմաններում<br>3.6. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում<br>3.7. Թունավորման թեթև ձևերի ամբուլատոր բուժում<br>3.8. Լաբորատոր ախտորոշում. համակլինիկական, բիոքիմիական, մանրէաբանական, շիճուկաբանական, հորմոնալ, ցիտոլոգիական և իմունաբանական<br>3.9. Գործիքային ախտորոշում. ռենտգենաբանական հետազոտություն, ուլտրաձայնային հետազոտություն, ֆունկցիոնալ, էնդոսկոպիկ զննումներ, համակարգչային տոմոգրաֆիա, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա<br>3.10. Բացառություն հանդիսացող հիվանդությունների և վիճակների գծով առաջնային խորհրդատվություն |

## IV. ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

4.1. Դժբախտ պատահարների հետևանքով հոսպիտալացում

4.2. Թերապևտիկ հիվանդությունների բուժում ստացիոնար պայմաններում

4.3. Վիրաբուժական հիվանդությունների բուժում ստացիոնար պայմաններում

4.4. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում ստացիոնար պայմաններում

4.5. Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր, պոլիտրավմաներ) բուժում ստացիոնար պայմաններում, բացառությամբ վնասվածքաբանական վիրարահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաների

4.6. Ներքին և արտաքին արյունահոսությունների բուժում ստացիոնար պայմաններում

4.7. Այրվածքների, ցրտահարությունների և էլեկտրահարությունների բուժում ստացիոնար պայմաններում

4.8. Թունավորումների բուժում ստացիոնար պայմաններում

4.9. Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում

4.10. Լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացում: Անգիոգրաֆիկ հետազոտությունները, այդ թվում՝ կորոնարոգրաֆիան, հատուցվում են այն դեպքում, երբ այդ հետազոտությանը հաջորդում է Ծրագրով նախատեսված վիրահատական միջամտություն

4.11. Սրտանոթային միջամտություններ և վիրահատություններ.*

Միջամտություններ՝

- ✓ Կորոնար զարկերակների ստենտավորում (դեղապատ և/կամ ոչ դեղապատ ստենտով)
- ✓ Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով
- ✓ Բարձր հաճախականության էլեկտրոաբլացիա

Վիրահատություններ՝

- ✓ Աորտակորոնար շունտավորում
- ✓ Աորտայի պրոթեզավորում (անհետաձգելի դեպքերում՝ աորտայի անևրիզմայի շերտազատում)
- ✓ Աորտայի պրոթեզավորում (քրոնիկ պլանային դեպքերում՝ աորտայի անևրիզմա)

* Սույն կետով բացառություն են հանդիսանում հետևյալ վիրահատությունները՝ սրտի փականների պլաստիկա, պրոթեզավորում, սրտի ռիթմը կարգավորող, վարող սարքերի տեղադրում

4.12. Անոթային վիրահատություններ և միջամտություններ

4.13. Նյարդավիրաբուժական վիրահատություններ և միջամտություններ

4.14. Չարորակ ուռուցքային հիվանդությունների վիրահատական բուժում

4.15. Բժշկական հաստատությունում կացության ծախսերի (հիվանդասենյակի արժեքի) հատուցում՝ օրական 10,000 ՀՀ դրամի սահմաններում

## V. ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ

5.1. Ամբուլատոր բուժում պահանջող յուրաքանչյուր քրոնիկ հիվանդության 1 սրացում

5.2. Ստացիոնար բուժում պահանջող յուրաքանչյուր քրոնիկ հիվանդության 1 սրացում

5.3. Վիրաբուժական բուժում պահանջող հիվանդությունների պլանային բուժում ամբուլատոր և/կամ ստացիոնար պայմաններում

## VI. ԴԵՂՈՐԱՅՔ

6.1. Բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքի ձեռքբերման ծախսերի հատուցում

6.2. Բուժող բժշկի կողմից նշանակված դեղորայքը անվճար/ուղեգրով ձեռք բերելու հնարավորություն համագործակցող դեղատների ցանցից

6.3. Անհետաձգելի դեպքերում սեփական միջոցներով գնված դեղորաքի գումարը ետ ստանալու համար անհրաժեշտ է ձեքբերման ՀԴՄ կտրոնները, բժշկի նշանակումը

և համապատասխան դիմումը ներկայացնել ապահովագրական ընկերություն գնելուց հետո 2 ամսվա ընթացքում:

## VII. ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ*

7.1. Պետական ծրագրից դուրս (հղի կնոջը ոչ տեղամասային պոլիկլինիկային կցելու դեպքում) հղիության հսկողություն

7.2. Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում ստացիոնար պայմաններում (այն դեպքում, երբ պաթոլոգիան սեռական ճանապարհով փոխանցվող ինֆեկցիաների կամ քրոնիկ հիվանդությունների արդյունք չէ)

7.3. Հղիության ընդհատում բժշկական ցուցումներով

7.4. Հետծննդյան շրջանում հիվանդասենյակում կացության ծախսերի հատուցում՝ առավելագույնը 10 օր, օրական 10,000 ՀՀ դրամի սահմաններում

* ա) 7.1-ից 7.3 կետերով նախատեսված ծառայությունները հատուցվում են 100,000 ՀՀ դրամի սահմաններում:

բ) Բացառություն են հանդիսանում հղիության ընթացքի կամավոր ընդհատման համար կատարված ծախսերը, եթե առկա չեն առողջությանը կամ կյանքին սպառնացող վիճակներ:

## VIII.ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ*

8.1. Ախտորոշում

8.2. Աչքի բազմատեսակ վնասվածքների և հիվանդությունների բուժում թերապևտիկ և վիրաբուժական եղանակներով

* Բացառություն են հանդիսանում՝ կոսմետիկ նպատակներով կատարվող վիրահատությունները, տեսողական արատներն ուղղելու նպատակով իրականացվող վիրաբուժությունը:

## IX. ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ*

Վերաբերվում է պայմանագրի գործողության ընթացքում ի հայտ եկած ախտաբանական երևույթներին և դրանց բուժմանը:

9.1. Ախտորոշում

- ✓ Ռենտգեն
- ✓ Օրթոպանտոմոգրամա
- ✓ Համակարգչային տոմոգրաֆիա
- ✓ Թերապիա (2 ատամի բուժում)
- ✓ Կարիեսի և/կամ նրա բարդությունների բուժում
- ✓ Ուղիների մշակում
- ✓ Պլոմբավորում լուսակարծրացող պլոմբանյութով
- ✓ ատամնաքարերի մաքրում, փայլեցում (մեկ տարվա ընթացքում ոչ ավել 2 անգամ)

9.2. Վիրաբուժություն

- ✓ Ատամի պարզ հեռացում՝
- ✓ Ատամի բարդ հեռացում՝
- ✓ Իմաստության ատամի հեռացում՝

* ա) Բացառություն են հանդիսանում այն ատամների մասով կատարված ծախսերը, որոնք նախնական բուժզննման արդյունքում արձանագրվել են որպես՝ պլոմբավորված, կարիեսով և/կամ նրա բարդություններով (պուլպիտ, պերիոդոնտիտ) ախտահարված, օրթոպեդիկ կոնստրուկցիաների տակ գտնվող ատամներ, բացառվում են նաև էսթետիկ բուժման, փորձարարական մեթոդների և կոսմետիկ ատամնաբուժության ծախսերը, լնդերի բուժման ծախսերը:

բ) Եթե Ապահովագրված անձը չի բուժվում Ապահովագրողի կողմից նշված ատամնաբուժական կլինիկայում, ապա Ապահովագրողի պահանջով պետք է անցնի հետբուժական հետազոտություն իր կողմից նշված կլինիկայում:

## X. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Իրականացվում է պայմանագրի գործողության ընթացքում 1 անգամ Ապահովագրողի կողմից ընտրված Բժշկական հաստատությունում

Իրականացվում է պայմանագրի գործողության ընթացքում 1 անգամ Ապահովագրողի կողմից ընտրված/առնվազն 5/ Բժշկական հաստատությունում

10.1. Թերապևտի խորհրդատվություն

10.2.Էլեկտրասրտագրություն (ԷՍԳ)

10.3.Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով

10.4.PAP թեստ 30-ից բարձր տարիքի կանանց համար

10.5.Կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն, բժշկի նշանակման դեպքում մամոգրաֆիական հետազոտություն 35-ից բարձր տարիքի կանանց համար

10.6.PSA թեստ 45-ից բարձր տարիքի տղամարդկանց համար

10.7.Որովայնի խոռոչի, փոքր կոնքի օրգանների և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն

10.8.Տեսողության ստուգում

10.9.Կանանց համար գինեկոլոգի խորհրդատվություն կամ տղամարդկանց համար ուռոլոգի խորհրդատվություն

XI. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ծրագրով որպես ապահովագրական պատահար չեն դիտվում և հատուցման ենթակա չեն.**

11.1. Մինչ ապահովագրության գործողության ուժի մեջ մտնելը առաջացած դեպքերը, վիճակները, հիվանդությունները, որոնց գծով կատարված բժշկական միջամտությունները, դեռ չեն ավարտվել կամ ունեն տրամաբանական շարունակություն

11.2. Դեպքերը և վիճակները, որոնց գծով չեն ներկայացվել կամ թերի են հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը

11.3. Առանց բժշկական ցուցման իրականացված ցանկացած բժշկական ծախս: Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը

11.4. Վնասվածքներ, որոնք հասցվել են ալկոհոլի, թմրանյութի և տոքսիկ նյութի օգտագործման հետևանքով. ալկոհոլային և թմրադեղային թունավորումների բուժում, թմրամոլություն, ալկոհոլիզմ, տոքսիկոմանիա և դրանց հետևանքները

11.5. Ապահովագրված անձի կողմից ինքնիրեն կանխամտածված մարմնական վնասվածքների պատճառում: Ինքնասպանության փորձ

11.6. Հատուկ վտանգավոր վարակներ (բնական օսպա, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բծավոր տիֆ, վիրուսային հեմոռագիկ տենդեր՝ Էբոլա, Լասսա, Մարբուրգ), ՀՀ և ԱՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված համաճարակներ, նաև այն տարածքներից ներմուծված վարակները, որոնց սահմաններում հայտնաբերվել և ճանաչվել/հայտարարվել են համաճարակների օջախներ

11.7. ՄԻԱՎ, ՁԻԱՀ, սեռական վարակներ, այդ թվում առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (բուժում և յուրաքանչյուր հիվանդության և/կամ վարակի համար հետազոտություն, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություն), սեռական օրգանների սնկային հիվանդություններ

11.8. Ճառագայթային հիվանդություն և դրա հետևանքները

11.9. Տուբերկուլյոզ

11.10.Հեպատիտ B, C, D և E, այդ թվում դրանց բացահայտմանն ուղղված հետազոտությունները, լյարդի ցիռոզ, քրոնիկ երիկամային անբավարարություն, պլանային հեմոդիալիզ

11.11. Շաքարային դիաբետ և դրա բարդությունները, այդ թվում դրա բացահայտման համար նախատեսված հետազոտությունները

11.12. Չարորակ ուռուցքային հիվանդությունների ոչ վիրահատական բուժում

11.13.Բնածին անոմալիաներ, զարգացման արատներ, ժառանգական և գենետիկ հիվանդություններ, այդ թվում՝ պոչուկի էպիթելային ուղիներ, և դրանց բարդությունները

| | |
|---|---|
| | (բուժում և հետազոտություններ, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություններ)<br>11.14. Անպտղություն, սեռական ֆունկցիայի խանգարում և էրեկտիլ դիսֆունկցիա (իմպոտենցիա), սեռական հորմոնալ դիսֆունկցիաներ, դաշտանային ցիկլի խանգարում, այդ թվում նշված հիվանդությունների/շեղումների բացահայտմանն ուղղված հետազոտությունները<br>11.15. Հակաբեղմնավորում, արհեստական բեղմնավորում<br>11.16. Բուժխնամք, բժշկի տնային կանչ<br>11.17. Հիվանդությունների պահպանողական բուժում, դինամիկ հսկողության համար նախատեսված խորհրդատվություններ և հետազոտություններ<br>11.18. Քրոնիկ հիվանդությունների դինամիկ հսկողության համար նախատեսված խորհրդատվություններ և հետազոտություններ<br>11.19. Բացիլակրության, դիսբակտերիոզի և պարազիտակրության համար նախատեսված հետազոտությունները և բուժումը<br>11.20. Վերականգնողական բուժում, ֆիզիոթերապիա, կինեզոթերապիա, լազերաթերապիա, փորձարարական և այլընտրանքային բժշկության մեթոդներ. իրիդոդիագնոստիկա, աուրիկուլոդիագնոստիկա, ասեղնաբուժական ախտորոշում, էլեկտրոնային բիոֆունկցիոնալ օրգանոմետրիա, մանուալ թերապիա, էներգոինֆորմատիկա, ցուբոթերապիա, էլեկտրաասեղնաբուժություն, հիրուդոթերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, ախտորոշում Ֆոլլի մեթոդով և այլն<br>11.21. Վիտամինաթերապիա, բացառությամբ Ծրագրի 7 կետի, կենսաբանական ակտիվ հավելումներ, հոմեոպատիկ դեղամիջոցներ, կոսմետիկ միջոցներ, խոտաբույսեր, տարբեր ծագման յուղեր<br>11.22. Այն ծառայությունները և բուժումը, որոնք մատուցվում են կանխարգելիչ և առողջարանային նպատակներով, կանխարգելիչ մերսում, ջրային պրոցեդուրաներ, աղիքների մոնիթորինգային մաքրում, սաունա, սոլյարի և այլն<br>11.23. էքստրակորպորալ բուժման մեթոդներ. օզոնաթերապիա, պլազմաֆերեզ, հիպերբարիկ օքսիգենացում, ալֆա-կապսուլա<br>11.24. Էնդոպրոթեզավորում, բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, երբ այլընտրանքային բուժում չկա, էնդոպրոթեզ, օրգանների փոխպատվաստում<br>11.25. Պրոթեզներ, իմպլանտներ, հարմարանքներ (օպտիկական ապակիներ/լինզաներ, շրջանակներ, լսողական սարքեր, հաշմանդամային սայլակներ, օրթոպեդիկ հարմարանքներ, այդ թվում՝ օրթոպեդիկ բարձ, օրթոպեդիկ ներքնակ, օրթոպեդիկ ներդիր, տակդիր, և այլն), բժշկական պարագաներ<br>11.26. Պլաստիկ և կոսմետիկ նպատակներով իրականացվող վիրաբուժություն (ներառյալ պլաստիկ և վերականգնողական վիրաբուժությունը), բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, մաշկի հիվանդությունների (կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ և խալեր, կանդիլոմաներ) և դրանց բարդացումների հետ կապված իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատություններ<br>11.27. Նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ: Աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, պսորիազ, օնիխոմիկոզներ, սեբորեա, ակնե (կորյակացան)<br>11.28. Հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս: Նևրոզներ և սահմանային վիճակներ (նեյրոցիրկուլյատոր դիստոնիա, վեգետոանոթային դիստոնիա, աստենո-դեպրեսիվ համախտանիշ, աստենո-նևրոտիկ համախտանիշ և այլն), հոգեկան հիվանդություններ<br>11.29. Քաշի և խոսքի շտկում, տեսողության շտկում լազերային վիրաբուժության մեթոդների օգնությամբ, սեռի վիրաբուժական փոփոխում<br>11.30. Ատամնաբուժության մեջ ցանկացած տեսակի պրոթեզավորում, պրոթեզավորման նախապատրաստում, թերմոֆիլների, անկերային բույթերի օգտագործում, օրթոդոնտիա, օրթոպեդիա, լնդերի բուժում |

| | |
|---|---|
| | 11.31. Մեքենավարման, զինակրության իրավունքի, սպորտաառողջարանային միջոցառումների մասնակցելու, ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում<br>11.32. Ծրագրում չընդգրկված ցանկացած բժշկական ծառայություն և բժշկական նշանակության ապրանք<br><br>XII. **ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ ՊԱՏՇԱՃ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**<br>Ծառայությունների ոչ պատշաճ մատուցման դեպքում շահառուն իր հիմնավորված փաստարկներն է ներկայացնում «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ, որից հետո վերջինս մեկ օրյա ժամկետում գրավոր ծանուցում է գնման պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությանը՝ թերությունները վերացնելու պահանջով, դրա համար սահմանելով հստակ ժամկետ: Ապահովագրական ընկերությունը սահմանված ժամկետում շահառուին պատշաճ ծառայություններ մատուցելու ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքում, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը ձեռնարկում է միջոցներ պայմանագիրը միակողմանի լուծելու համար: |
| **Շահառուներ** | **Առողջության ապահովագրման ծառայությունը կամավոր է:**<br>**Առողջության ապահովագրման շահառուներ են համարվում «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի աշխատակիցները, թվով մինչև 850 մարդ:**<br>**Գնային առաջարկը ներկայացվում է մինչև 850 շահառուի հաշվարկով: Շահառուների փաստացի քանակը և ցանկը կներկայացվի հրավերով սահմանվող անգործության ժամկետի ավարտից հետո, կնքվելիք պայմանագրի նախագծի հետ միասին:**<br>**Ապահովագրական ընկերությունը պարտավոր է ցանկում ներառված անձանց տրամադրել ապահովագրական անհատական քարտեր պայմանագիր կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:**<br>**Պայմանագրի գործողության ընթացքում ՀԱՊՀ-ում աշխատանքի ընդունված անձը իրավունք ունի միանալու ապահովագրական փաթեթին 1 ամսվա ընթացքում:**<br>**Աշխատանքից ազատվող անձն ազատման հրամանի օրվա դրությամբ դադարում է օգտվել ապահովագրական ծառայությունից, և վճարումը իրականացվում է մինչ այդ ժամակահատված համար:** |
| **Պայմանագրի գործողության ժամկետ** | Պայմանագիրն ուժի մեջ կմտնի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու, դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելուց հետո և կգործի 1 տարի |
| **Գործողության տարածք** | Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն |
| **Սպասարկում** | Ապահովագրված անձն իրավունք ունի սպասարկվելու ՀՀ և ԱՀ տարածքում գործող ցանկացած լիցենզավորված բժշկական հաստատությունում, ընդ որում սպասարկումն իրականացվում է ապահովագրված անձի կողմից ***ԱՌԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՎՃԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ***: |
| **Նախնական ընդհանուր բուժզննություն** | Չի իրականացվում: |
| **Տարիքային սահմանափակում** | Չի կիրառվում |
| **Ընտանիքի անդամներ** | 8.1 Պայմանագրի ներքո կարող են ապահովագրվել միայն Ապահովադրի գրանցված աշխատողները: Ապահովագրողը պետք է հնարավորություն տա նման պայմաններով ապահովագրվելու նաև ապահովագրված աշխատողների ընտանիքի անմիջական անդամներին՝ մինչև 65 տարեկան ամուսին, ծնող(ներ), հարազատ քույր(եր), հարազատ |

| | |
|---|---|
| | եղբայր(ներ), զավակ(ներ): Ընտանիքի անդամները կարող են ապահովագրվել հետևյալ կարգով՝<br>8.1.1. Տվյալ աշխատողի ապահովագրության գործողության սկզբից հետո 1 ամսվա ընթացքում:<br>8.1.2. Պայմանագրի ներքո ապահովագրված անձ-աշխատողի ամուսնության դեպքում ամուսինը կարող է ապահովագրվել ամուսնության օրվանից մեկ ամսվա ընթացքում:<br>8.1.3. Պայմանագրի ներքո ապահովագրված անձ-աշխատողի զավակ(ներ)ի ծննդյան դեպքում զավակ(ներ)ը կարող են ապահովագրվել ծննդյան օրվանից մեկ ամսվա ընթացքում:<br>Ապահովագրված անձ-աշխատողի ընտանիքի անդամի ապահովագրության դեպքում աշխատողը պետք է ներկայացնի ընտանիքի անդամների անձնագրերի պատճենները, ընտանեկան կապը հաստատող փաստաթղթեր կամ, Ապահովագրողի պահանջով, այլ հիմնավորող փաստաթղթեր:<br>8.1.4 18 տարեկանից բարձր բոլոր Ընտանիքի անդամները պարտավորվում են անցնել միայն նախնական ատամնաբուժական հետազոտություն, որն իրականացվում է Ապահովագրողի հաշվին: |

**ՀԱՅՏԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Հայտի գրանցում
24 ժամվա ընթացքում

Բժիշկ փորձագետի հետադարձ զանգ

↓

Անվճար սպասարկում ՀՀ և ԱՀ տարածքում գործող ցանկացած լիցենզավորված բժշկական հաստատությունում

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր ---------- Ռ.Սարուխան
(ստորագրություն) ԿՏ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ

Հասցեն՝ ք.Երևան, Հյուսիսային պող.10
Բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010050745
ՀՎՀՀ 02574465

Տնօրեն ---------- Ա.Դաղունց
(ստորագրություն) ԿՏ

*Հավելված N 2*
*« 31 » հունվար 2020թ. կնքված*
*N ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 66511120 | Առողջության ապահովագրման ծառայություն | 3683333 | 7366666 | 11049999 | 14733332 | 18416665 | 22099998 | 25783331 | 29466664 | 33149997 | 36833330 | 40516663 | 40516663 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*2021թ.-ի համար ժամանակացույցը կլրացվի և կկնքվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր _____ Ռ.Մարոյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ

Հասցեն՝ ք.Երևան, Հյուսիսային պող.10
Բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010050745
ՀՎՀՀ 02574465

Տնօրեն _____ Ա.Դաղունց
(ստորագրություն)